

Ի շուքն ժողովեալ, ի հոտն զմայլեալ,  
 զպտուղն ճաշակեալ:  
 Մովսէս երանեալ, երբ վախճան հասեալ,  
 զկրտակ արարեալ.  
 (Իսկ զաթոռն յանձնեալ ի Փիլիպպոսն ընտրեալ  
 հանուրց պետ կարգեալ)  
 Յերկինս փոխեցեալ, ընդ սուրբ հարսն  
 հետեւեալ, ընդ հրեղէնսն պարակցեալ:  
 Բարեխօսութեամբ սուրբ հայրապետիս  
 Տէր այց արա՛ տառապեալ ազգիս,  
 Աղաչեմք լուր Տէր:

## 19. ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Էր սա այր մեծախորհուրդ  
 եւ շինարար, պահող, ճգնող  
 եւ արտասուեղ, ողորմած եւ  
 զթած ի վերայ ազբատաց,  
 մանաւանդ թէ եւ զերեւոյց»:  
 Ղուկաս զրիչ:

Մովսէս կաթողիկոս, ինչպէս ականատես-  
 ները միարեւրան կը վկայեն, «էր ամենեւին  
 պարզ բարոյիւք եւ ազատական մտօք, զե-  
 ղեցկադիր եւ փառազարդ զիմօք վայելչա-  
 ցեալ, զմիջինն ունելով չափ հասակին. եւ բո-  
 լորովին ներքին եւ արտաքին մարդով շնոր-  
 հաշուք եւ ճոխութեամբ արեստիայլեալ»:  
 Մովսէս Բջնեցի<sup>1</sup>, որուն են տողերս, կ'աւել-  
 ցնէ, թէ այն յատկութիւնները, «յորում յա-  
 բոյց (Աստուած) զսուրբն զիսահակ պար-  
 թեւազինն, համարեսջիր ըստ ամենայն բա-

<sup>1</sup> Ձեռ. Էջմ., 981. Արարատ, 1888, էջ 417—418: